



Առողջապահության Պատասխանատուի Հարկադիր Պահանջ

Շրջանն ունի Առողջապահության Պատասխանատուի Հրաման (HOO)՝ ուղեկցող արձանագրություններով, որոնք հրապարակվում են COVID-19-ի տարածումը դանդաղեցնելու համար: Առողջապահության Պատասխանատուի ամենավերջին հրամանը և վերաբացման արձանագրությունները հրապարակված են այստեղ՝ <http://ph.lacounty.gov/media/Coronavirus/reopening-la.htm>: Շրջանի Հանրային Առողջապահության Շրջակա Միջավայրի Առողջապահության բաժնին հանձնարարվել է Առողջապահության Պատասխանատուի Հրամանին (HOO) և արձանագրություններին համապատասխանության ապահովման առաջնային պատասխանատվությունը:

Շրջակա Միջավայրի Առողջապահության տեսուչները կատարում են տեղում այցեր՝ 1) ապահովելու համապատասխանությունը HOO-ին և կիրառելի արձանագրություններին, 2) ի պատասխան բողոքի կամ 3) քննելու բռնկման մասին զեկուցումը: Յուրաքանչյուր այցի հիմնական նպատակն է բիզնեսների ղեկավարներին տեղեկացնել HOO-ի տարբեր պահանջների մասին համապատասխանությունը ապահովելու նպատակով: Խախտումների հայտնաբերման դեպքում տեսուչը կտրամադրի Ստուգման Պաշտոնական Հաշվետվություն (ստուգման հաշվետվություն) և կտրամադրի համապատասխանության ամսաթիվ՝ հաստատելու, որ հայտնաբերված խախտումները շտկվել են: Բիզնեսի կողմից համապատասխանության ամսաթվի դրությամբ խախտումների չշտկելը կամ խախտումների կրկնվելը կարող են հանգեցնել հետագա հարկադիր գործողությունների, ներառյալ համապատասխանության ապահովման վճարի գնահատումը:

Այն դեպքում, երբ տեսուչը հայտնաբերում է HOO-ի կամ արձանագրությունների **Կոպիտ Խախտում**, նա կտրամադրի Վարչական Ակտ՝ ստուգման հաշվետվության հետ միասին: Կոպիտ խախտումների շարքին են դասվում այն խախտումները, որոնք բարձրացնում են աշխատակիցների և հաճախորդների շրջանում COVID-19-ի տարածման վտանգը և կարող են հանգեցնել առաջին այցի ժամանակ տրամադրվող \$500-ի Վարչական Ակտի:

Կոպիտ խախտումները ներառում են.

- Չի իրականացվել աշխատակիցների COVID-19-ի ստուգում
- Չի զեկուցվել աշխատավայրում COVID-19-ով վարակման 3 կամ ավելի դեպքերի մասին
- Չի ապահովվել բոլոր աշխատակիցների կողմից ըստ պահանջի դիմակներ կրելը
- Չի ապահովվել աշխատակցի կողմից դեմքի վահան կրելը՝ առանց դիմակ հաճախորդի հետ շփվելիս (օր.՝ ռեստորանի մատուցող)
- Տեղում մաքրման և ախտահանման պարագաների պակաս
- Փակ տարածքներում զբաղվածության սահմանափակման գերազանցում (Բացօթյա հաստատությունները, որոնք չեն համապատասխանում բացօթյա գործունեության համար սահմանված նահանգի ուղեցույցներին, համարվում են «փակ հաստատություններ» և ենթակա են փակ տարածքների համար գործող սահմանափակումներին)
- Զբաղվածության վերահսկման և հեռավորության պահպանման մեխանիզմների բացակայություն (այսինքն՝ չեն կատարվել բոլոր մուտքերի կամ ֆիզիկական հեռավորություն սահմանելու համար չափագրումներ) և հաստատությունը, կարծես, գերազանցում է զբաղվածության չափը - *Մա կարող է հանգեցնել նաև ժամանակավոր փակման, մինչև զբաղվածությունը նվազի և իրականացվեն չափագրումներ*
- Սեղաններն անհրաժեշտ վայրերում տեղադրված չեն 8 ոտնաչափ հեռավորությամբ
- Հաճախորդներն ուտում են ճաշելու համար չնախատեսված վայրերում (օր.՝ շրջում են սննդով, ուտում են այն տարածքում, որը պետք է փակ լինի սպասարկման համար, ինչպիսիք են՝ բարերի տարածքները)
- Կենդանի ժամանց, ներառյալ, բայց չսահմանափակվելով, DJ, կենդանի պարողներ կամ պար, հումորային դերասաններ, կենդանի երաժշտություն կամ այլ կենդանի միջոցառումներ
- Գործում է տվյալ պահին արգելված տարբերակով (օր.՝ փակ տարածքների կամարածն սրահը (arcade) փակ է համաձայն՝ HOO-ի հրամանի, Հանրային Առողջապահության կողմից բիզնեսին կարգադրված է եղել փակել)
- Այլ գործողություններ, որոնք խախտում են Առողջապահության Պատասխանատուի հրամանը, որոնք վտանգում են աշխատակիցների կամ հաճախորդների առողջությունը

Վարչական ակտերը կարող են բողոքարկվել ակտը հրապարակելուց հետո 10 օրվա ընթացքում: Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք այցելել <http://publichealth.lacounty.gov/eh/citation/administrative-citation->



[appeals.htm](#): Վարչական ակտը չվճարելը կարող է հանգեցնել գույքի նկատմամբ կալանքի՝ ինչպես լիազորված է Լոս Անջելեսի Շրջանի Օրենսգրքով:

HOO-ի և վերաբացման արձանագրությունների հետ կապված ցանկացած հարցի դեպքում խնդրում ենք կապ հաստատել մեր Արդյունաբերության Ներգրավման ծրագրի հետ (626) 430-5320 հեռախոսահամարով կամ ձեր հարցերն ուղղելով հետևյալ էլ. հասցեին՝ EHConsultative@ph.lacounty.gov: